



ՆԱՅԱՍԱԿԱՆ ԿԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՏԱԳԲԱՆՆԵՐԻ ՊԱՎԱՏ

0010, ՆՆ, ք. Երևան, Զարյան 7-2
Տեlex: (+374 10) 600 701, 600 704
Տեlex: (+374 10) 600 703
Էլ-փոստ: info@advocates.am
Կայք: www.advocates.am

№ 01/01/ 489 -20

« 01 » 04 2020թ.

Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, պարետ՝ պարոն Տիգրան Ավինյանին

Հարգելի պարոն Ավինյան,

1. Դեռևս, Պարետի 24.03.2020 թվականի № 14 որոշմամբ որոշ բացառություններով արգելվել էր տնտեսական գործունեության տեսակներով զբաղվելը, իսկ բացառությունների մեջ չէր ներառվել փաստաբանական գործունեության տեսակը (69.10.0):

Այդ խնդիրը լուծվել է Պարետի 25.03.2020թ. N17 որոշմամբ, մասնավորապես բացառություններ նախատեսող հավելվածում լրացվել է 73-րդ ենթակետը՝ «69.10.0»-իրավաբանական գործունեություն՝ բացառապես փաստաբանական գործունեության մասով»:

Պարետի 31.03.2020թ. N 27 որոշման N 1 հավելվածով սահմանվել է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում անձանց ազատ տեղաշարժի իրավունքի նկատմամբ ժամանակավոր սահմանափակումները, իսկ N 2 հավելվածով՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ ժամանակավոր սահմանափակումները:

Նշված որոշման N 2 հավելվածի աղյուսակ 1-ում (M) Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն բաժնում՝ 69.10 կոդի դիմաց «Թույլատրված» սյունակում նշվել է «Բացառությամբ փաստաբանական գործունեության մասով», իսկ «Արգելված» սյունակում՝ «Մեծամասամբ արգելվում է: Հնարավոր է բացառապես առցանց կամ հեռավար եղանակով» բառերը:

Ինչպես արդեն նշել ենք դեռևս 24.03.2020թ. գրությամբ, ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածի համաձայն՝ արտակարգ դրության ժամանակ մարդու և քաղաքացու այն հիմնական իրավունքները և ազատությունները, որոնք երաշխավորված են մասնավորապես Սահմանադրության 61-րդ (Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը), 63-րդ (Արդար դատաքննության իրավունքը), 64-րդ (Իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը) և 67-րդ (Մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը) հոդվածներով, չեն կարող սահմանափակվել:

Սահմանադրության 64-րդ հոդվածով է սահմանված նաև մարդու իրավաբանական օգնությունն ապահովող ինստիտուտը՝ փաստաբանությունը: Ընդ որում, փաստաբանի իրավունքները և պարտականությունները կարող են սահմանվել, հետևաբար և սահմանափակվել միայն ՕՐԵՆՔՈՎ:

Այս նորմերի լույսի ներքո պարզաբանման կարիք ունի Պարետի 31.03.2020թ. N 27 որոշման N 2 հավելվածի աղյուսակ 1-ում (M) Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն բաժնում՝ 69.10 կոդի դիմաց «Թույլատրված» սյունակում նշված «Բացառությամբ փաստաբանական գործունեության մասով», իսկ «Արգելված» սյունակում՝ «Մեծամասամբ արգելվում է: Հնարավոր է բացառապես առցանց կամ հեռավար եղանակով» արտահայտություններով վարքագծի կանոնը:

2. Պարետի 31.03.2020թ. N 27 որոշման N 1 հավելվածի 7-րդ կետում նշվել է, որ «Սույն հավելվածի **5-րդ կետի սահմանափակման արգելքը կիրառելի չէ՝**

1) երեխաների փոխադրման դեպքում.

2)...

3) նույն ընկերության աշխատողների փոխադրման դեպքում:»:

Նշված հավելվածի 5-րդ կետը փոխադրման հետ կապված հարաբերություն չի կարգավորում: Հավանաբար հղումը պետք է կատարվեր հավելվածի 6-րդ կետին, քանի որ այդ կետն է կարգավորում փոխադրման հետ կապված հարաբերություններ:

Միևնույն ժամանակ օգտագործվել է «ընկերության աշխատողների» հասկացությունը, մինչդեռ «ընկերությունը» առևտրային կազմակերպության տեսակներից մեկն է:

Վերոգրյալի հիման վրա՝

խնդրում եմ՝

Ա. Պարզաբանել՝

1. Արդյո՞ք փաստաբանական գործունեությունը Պարետի որոշմամբ սահմանափակվել կամ արգելվել է:
2. Եթե սահմանափակվել է, ապա՝ արդյո՞ք փաստաբանական գործունեությունը թույլատրվել է միայն առցանց կամ հեռավար կարգով. եթե այո, ապա ինչպե՞ս կարող է փաստաբանը մեղադրյալի հարցաքննությանը, քննչական այլ գործողություններին, կամ կալանավորման հարցը որոշող դատական նիստերին մասնակցել առցանց կամ հեռավար կարգով:

¹ «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ արտակարգ դրության ժամանակ սույն հոդվածով նախատեսված միջոցառումների իրականացումը չի կարող խոչընդոտել ...Հայաստանի Հանրապետության դատարանների բնականոն գործունեությունը:

Բ. Փոփոխություն կատարել Պարետի 31.03.2020թ. N 27 որոշման N 2 հավելվածի Աղյուսակ 1-ում՝ (M) Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն բաժնում՝ 69.10 կոդի դիմաց՝

1) «Թույլատրված» սյունակում նշված «**Բացառությամբ փաստաբանական գործունեության մասով**» բառերը փոխարինել «**Բացառապես փաստաբանական գործունեության մասով**» բառերով.

2) «Արգելված» սյունակում՝ «**Մեծամասամբ արգելվում է: Հնարավոր է բացառապես առցանց կամ հեռավար եղանակով**» բառերից հետո լրացնել «**Փաստաբանական գործունեությունը հնարավոր է իրականացնել ամբողջ ծավալով՝ Պարետի 31.03.2020թ. N 27 որոշման 3-րդ կետի պահպանման պայմանով**»:

Գ. Փոփոխություն կատարել Պարետի 31.03.2020թ. N 27 որոշման N 1 հավելվածի 7-րդ կետում՝

1) «5-րդ կետի» բառերը փոխարինել «6-րդ կետի» բառերով.

2) 3-րդ ենթակետում՝ «նույն ընկերության» բառերը փոխարինել «նույն գործատուի» բառերով:

Հարգանքով՝

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

01.04.2020

X



VERIFIED OCSP 01.04.2020 10:54:14 GMT+4

Signed by: ZOHRABYAN ARA 2204780227